ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի սեպտեմբերի 19-21-ը Մոնտեգո Բեյում (Սան Ջեյմս, Ջամայկա) գործուղման արդյունքների մասին

1. **Անուն, ազգանունը՝**

   Երջանիկ Հակոբյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Մոնտեգո Բեյ (Սան Ջեյմս, Ջամայկա) 2023 թվականի սեպտեմբերի 19-21-ը

4. **Հրավիրող կողմը՝**

   ԱՄՆ Թմրամիջոցների դեմ պայքարի գրասենյակի (DEA)

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

   Թմրամիջոցների դեմ պայքարի 37-րդ միջազգային համաժողով (IDEC)

6. **Քննարկված թեմաները՝**

   Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և պրեկուրսորների միջազգային ապօրինի շրջանառության ոլորտում իրականացվող միջոցառումների, հատուկ գործողությունների կազմակերպման և անցկացման փորձի վերաբերյալ հարցեր, ինչպես նաև սահմանով տեղափոխվող բեռնարկղերի, դրանցով փոխադրվող ապրանքների նկատմամբ՝ մաքսային իրավախախտումների, այդ թվում՝ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի խմբաքանակների հայտնաբերման վերաբերյալ քննարկումներ:

   Քննարկվել են թմրանյութերի տեղափոխման հնարավոր նոր ուղիները և հնարավոր վտանգները՝ ըստ տարածաշրջանների:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

   Միջոցառումների կազմակերպում, որոնք ուղղված են ներքին և միջազգային շուկաներում ապօրինի վերահսկվող նյութերի հասանելիության նվազեցմանը: ԱՄՆ Թմրամիջոցների դեմ պայքարի գրասենյակի (DEA) կողմից թրեյնինգների անցկացում՝ մասնագիտական ունակությունները զարգացնելու նպատակով:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝**

10. **Ստորագրությունը, ամսաթիվը**

27.09.2023թ.